

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ

ԴՊՐՈՑԻ

ԴԱՍԵՐ

ԿՐՏՍԵՐ ԲԱԺԻՆ
Ա. ԴԱՍԱՐԱՆ

ՊԱՏՐԱՍԵՑ
ՆՈՒՊԱՐ ՍՐԿ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

ՄՈՆՔԷԱԼ
2000

Հողեկան անհուն գոհունակութեամբ կը վերահրատարակենք Կիրակնօրեայ դպրոցներու բազմավաստակ մշակ՝
Բարչ. Նուպար Մրկ. Պէրպէրեանի պատրաստած ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ԴԱՍԵՐՈՒ Կրտսեր Բաժնի երեք
գիրքերը՝ պատրաստուած արդի մանկավարժական ըմբռնողութեամբ եւ հայ մանուկին մատչելի ու դիւրահաս-
դորդ կերպով:

Անկասկած որ, այս երեք դասագրքերուն վերահրատարակութիւնը օրհնաբեր պիտի ըլլայ Կիրակնօրեայ
Դպրոցներու աշակերտութեան համար, որովհետեւ տասնամեակէ մը ի վեր զգալի էր պահանջը նման հրատա-
րակութեանց:

Այս առթիւ եղբայրական պարտք կը զգանք մեր շնորհակալութեան անկեղծ զգացումները յայտնել Ամե-
րիկահայոց Արեւելեան Քեմի Առաջնորդ՝ Գեորգ. Տ. Մեքրոպ Ս. Արք. Աշնեանին, որուն բարեխօսութեամբ ազ-
նիւ բարեբարուհին՝ տիկին ԾԱՓԻԿ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ, սիրայօժար ստանձնեց սոյն գրքին հրատարակութեան ծախ-
սերը:

Մեր պատուէրն ու թելադրանքն է Կիրակնօրեայի մեր դաստիարակ ուսուցիչներուն, որ յատուկ բժա-
խնդրութեամբ ու նախանձախնդիր ոգիով դորձածեն այս դասագիրքերը հետեւելով վարը եղած մասնանշումնե-
րուն:

20 Յունուար 1986
Անթիլիաս




ՍԵՊՈՒՀ Ծ. ՎՐԴ. ՍԱԳԻՍԵԱՆ
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ

ԴԱՍԱԳԻՐՔԻՍ ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ ԵՂԱՆԱԿԸ

Այս դասագիրքը կը բաղկանայ երեսուն երեք դասերէ, Ձմեռնային Ուսման Տարեշրջանի ծրագրին
համաձայն պատրաստուած:

- 1.— Մանկապարտիզպանուհին՝ իւրաքանչիւր աշակերտի դասագրքին կռկիկ կողմ մը պէտք է
անցնէ, որպէսզի մաքուր պահուի: Այս կողքին վրայ պէտք է փակցնէ պիտակ մը, անոր վրայ գրելով աշա-
կերտին անունն ու մականունը եւ Ուսումնական Տարեշրջանի թուականը:
- 2.— Աշակերտներուն պատկանող դասագրքերը, Ուսումնական Տարեշրջանի ամբողջ ընթացքին
պէտք է պահուին դպրոցէն ներս՝ գոյֆապահին մօտ: Ամէն Կիրակի անոնք պէտք է տրամադրուին իրենց տե-
րերուն, առ ի գործածութիւն:
- 3.— Ուսուցիչը նախ քան դպրոց գալը, պարտի սերտել օրուայ դասը, խորագրին ներքեւ ճշա-
նակուած հատուածը կարդալով ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՁԷՆ:
- 4.— Դասաւանդութեան պահուն, իւրաքանչիւր աշակերտ իր ձեռքին մէջ պէտք է ունենայ իր
դասագիրքը: Ուսուցչին օգնութեամբ պէտք է բանայ օրուայ դասին տեղը, եւ դիտէ նկարը ու հետեւի ու-
սուցչին, որ նկարին վարի բաժինը գտնուող մի քանի տող դասը կարդալէ ետք, պէտք է հետաքրքրական
կերպով պատմէ դասը եւ կռկնել տայ. ապա գոց սուրճեմէ ստորեւ գրուած ԳՈՑ ՍՈՐՎԻԼ քաժնի հատուածը:
- 5.— Դասաւանդութիւնը պէտք է տեւէ 5-10 վայրկեան եւ ո՛չ արելի: Ապա գումարը մատիտներ
պէտք է տրամադրուին աշակերտներուն եւ ուսուցչաց օգնութեամբ նկարները ներդաշնակ կերպով ներկել
տալու փորձեր կատարուին:
- 6.— Այս աշխատանքներուն վրայ լուրջ կերպով պէտք է հսկէ ՄԱՆԿԱՊԱՐՏԻՉՊԱՆՈՒՀԻՆ:
- 7.— Այս բոլորէն ետք իւրաքանչիւր աշակերտի դասագիրքը պէտք է յանձնուի դպրոցի գոյֆա-
պահին: ՏԱՐԵՎԵՐՁԻՆ աշակերտները կ'ըստաման իրենց դասագիրքերը եւ կը տանին տուն, ուր ծնողք
պէտք է խնամքով պահեն գայն, իրր գեղեցիկ յիշատակ մը, իրենց գաւկին հաշույն:

ՍՈՒՐԲ ԿՈՅՍ ՄԱՐԻԱՄ





Գալիլիոյ Նազարէթ քաղաքին մէջ կը բնակէր Մարիամ անունով շատ բարի ու ազնիւ Կոյս մը, որ նշանուած էր Յովսէփ անունով արդար մարդու մը:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Բարի անունը՝ շատ հարստութենէն աւելի ընտիր է: Առակ. ԻԲ. 1:

ՄԱՔՈՒՐ ԵՒ ԱՆԲԻԾ ՇՈՒՇԱՆԸ



Սուրբ Կոյս Մարիամ, իր մաքուր եւ անարատ կեանքով՝
նմանեցաւ անբիծ ու անուշահոտ շուշանի մը:



ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Շատ աղջիկներ առաջինի եղան, բայց դուն ամենէն զերազանց եղար:

Առակ. ԼԱ. 29:

ՍՈՒՐԲ ԿՈՅՍԻՆ ԱԻԵՏՈՒՄԸ

(Ղուկ. Ա. 26—38)



Օր մը Գաբրիէլ հրեշտակը Մարիամին երեւցաւ ու ըսաւ .

— Ուրախ եղիր, ով բերկրեալ, Տէրը քեզի հետ է: Դուն որդի մը պիտի ունենաս եւ անոր անունը Յիսուս պիտի դնես: Ան Աստուծոյ Որդի պիտի կոչուի:

Մարիամ խոնարհեցաւ եւ ըսաւ .



— Ես Տիրոջ ազախինն եմ:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Ուրախ եղիր, ով բերկրեալ, Տէրը քեզի հետ է: Ղուկ. Ա. 28:

ՅՈՎԱԷՓ ԵՒ ՄԱՐԻԱՄ ԲԵԹԼԵՅԷՄ Կ'ԵՐԹԱՆ

(Ղուկ. Բ. 1—5)





Օգոստոս կայսրը հրաման հանեց, որ ամէն մարդ իր փառաքը երթայ եւ արձանագրուի: Յովսէփ եւ Մարիամ Բեթլեհէմ գացին արձանագրուելու: Սակայն պանդոկին մէջ տեղ չկար իրենց համար: Ուստի ստիպուեցան փարայր մը մտնել որ կենդանիներու բնակարան էր:

ԳՈՅ ՍՈՐՎԻԼ

Յովսէփ ալ Գալիլիայի Նազարէթ քաղաքէն ելաւ եւ զնաց զէպի Հրէաստան՝ Դաւիթի քաղաքը, որ Բեթլեհէմ կ'ըսուի: Ղուկ. Բ. 4:

ՅԻՍՈՒՍԻ ԺՆՈՒՆԴԸ

(Ղուկ. Բ. 6—7)





Յիսուս Մանուկ ծնաւ Բեթլեհէմի քաղաքին մէջ: Մարիամ իր նորածինը խան-
ձարուրով փաթթեց եւ պառկեցուց մսուրին մէջ:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Եւ իր անդրանիկ որդին ծնաւ, ու խանձարուրով փաթթեց եւ զանիկա
մսուրին մէջ պառկեցուց: Ղուկ. Բ. 7:

ՅՈՎԱԷՓ ԵՒ ՄԱՐԻԱՄ ԿԸ ՀՍԿԵՆ



Յովսէփ եւ Մարիամ փառք կուտան Աստուծոյ Յիսուսի ծնունդին համար եւ գուրգուրանքով կը հսկեն Անոր վրայ :



ԳՈՑ ՍՈՐՎԻԼ ԵՒ ԵՐԳԵԼ

Այսօր տօն է Սուրբ Մննդեան. աւետիս :

Տեան Մերոյ եւ Յայտնութեան. աւետիս :

ՀՈՎԻՆԵՐՈՒՆ ՏՐՈՒԱԾ ԱՒԵՏԻՍԸ

(Ղուկ. Բ. 8—14)



Բեթլեհեմի դաշտին մէջ, գիշեր ատեն, հովիւներ իրենց հօտերուն պահպանութիւնը կ'ընէին: Յանկարծ մեծ լոյս մը ծագեցաւ եւ Տիրոջ հրեշտակը երեւցաւ իրենց ու ըսաւ.

— Մի՛ վախնաք, ես ձեզի մեծ ուրախութեան աւետիս մը կուտամ: Այսօր Դաւիթի քաղաքին մէջ ձեզի Փրկիչ մը ծնաւ, որ Օծեալ (թագաւոր) Տէր է: Նայն միջոցին բազմաթիւ հրեշտակներ երեւցան երկնքին վերեւ, որոնք կ'երգէին, «Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:



ԳՈՑ ՍՈՐՎԻԼ ԵՒ ԵՐԳԵԼ

Փառք ի բարձունս Աստուծոյ, եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն:

Ղուկ. Բ. 14:

ՎԵՐԱԳԱՐՉ ԵԳԻՊՏՈՍԷ

(Մատթ. Բ. 19—23)





Հայր Յովսէփ, Հերովդէս թագաւորին մահը իմանալէ ետք, Յիսուս Մանուկն ու Մարիամ Աստուածածինը հետը առնելով վերստէ արձաւ Եգիպտոսէն, ու բնակեցաւ Գալիլիոյ Նազարէթ քաղաքը:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Եւ եկաւ Նազարէթ կոչուած քաղաքը բնակեցաւ: Մատթ. Բ. 23:

ՅԻՍՈՒՍ ՄԱՆՈՒԿ ՄՍՈՒՐԻՆ ՄԷՋ





Յիսուս երկնքի փառքը թողլով իջաւ երկիր. եղաւ մանուկ, ծնաւ Բեթլեհէմի անշուք ֆարայրին մէջ ու պառկեցաւ կենդանիներու մտուրին մէջ: Ան աշխարհ եկաւ մարդոց Փրկիչ ըլլալու համար:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Աստուած զԱնիկա իր աջ ձեռքով Առաջնորդ ու Փրկիչ ըլլալու բարձրացուց:

Գործք Ե. 31:

ՅԻՍՈՒՍ ՀԱՅՐ ՅՈՎԱԵՓԻ ԳՐԿԻՆ ՄԷՁ





Հայր Յովսէփ շատ կը սիրէր Յիսուս Մանուկը եւ յաճախ
կը գրկէր զԱյն ու կը գգուէր:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Քու Տէր Աստուածդ բոլոր սրտովդ, բոլոր հոգևովդ
ու բոլոր զօրութիւնովդ սիրես: Բ. Օրին. 2, 5:

ԵՐԵՔ ՄՈԳԵՐԸ

(Մատթ. Բ. 1—2)





Արեւելի մէջ երեք մոգեր Յիսուսի աստղը տեսնելով հասկցան թէ աշխարհի համար նոր թագաւոր ու Փրկիչ մը ծնած է: Ուստի այդ աստղին առաջնորդութեամբը ճամբայ ելան Յիսուս Մանուկը գտնելու:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Վասնզի մենք Արեւելի մէջ անոր աստղը տեսանք: Մատթ. Բ. 2:

ԵՐԵՔ ՄՈԳԵՐՈՒՆ ԳԱՆՈՒՍՁ

(Մատթ. Բ. 9—11)





Երեք մոգերը Յիսուսի աստղին առաջնորդութեամբ գացին Բեթլեհէմ: Հոն գտան Յիսուս Մանուկը եւ Անոր երկրպագութիւնը ըրին: Ապա Յիսուս Մանուկին նուէր տուին՝ ոսկի, կնդրուկ եւ զմուռս:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Ու երկրպագութիւնը ըրին Անոր: Մատթ. Բ. 11:

ՓԱԽՈՒՍ ԴԵՊԻ ԵԳԻՊՏՈՍ

(Մատթ. Բ. 13—15)






Հայր Յովսէփ, Յիսուս Մանուկն ու անոր մայրը՝ Մարիամը, փախցուց դէպի
Եգիպտոս, որովհետեւ Հերովդէս քագաւոր կ'ուզէր մեռցնել Յիսուս Մանուկը:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Եւ Ան ելաւ, առաւ մանուկն ու անոր մայրը գիշեր ատեն, եւ գնաց Եգիպտոս Մատթ. Բ. 14:

ԵԳԻՊՏՈՍԷ ՎԵՐԱԳԱՐՉ




Հայր Յովսէփ Հեբրովդէս քաղաւորին մահը իմանալէ ետք, Յիսուս Մանուկն ու Մարիամ Աստուածածինը, վերադարձուց Եգիպտոսէն եւ բնակեցաւ Գալիլիոյ Նազարէթ քաղաքը:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Եւ եկաւ Նազարէթ կոչուած քաղաքը բնակեցաւ: Մատթ. Բ. 23:

ՅԻՍՈՒՍ ՄԱՆՈՒԿԸ ԿԸ ՄԵԾՆԱՐ

(Ղուկ. Բ. 39—40)



Յիսուս Մանուկը Գալիլիոյ Նազարէթ քաղաքին մէջ կը մեծնար... ու Աստուծոյ շնորհքը անոր վրայ էր: Յիսուս միշտ հնազանդ էր իր մօրը եւ շատ կը սիրէր զայն:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Եւ մանուկը կը մեծնար ու Հոգւով կը զօրանար՝ իմաստութեամբ լեցուած:

Ղուկ. Բ. 40:

ՊԱՏԱՆԻ ՅԻՍՈՒՍ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ

(Ղուկ. Բ. 41—49)



Յիսուս տասներկու տարեկանին Երուսաղէմ գնաց իր ծնողքին հետ: Վերադարձին Յովսէփ եւ Մարիամ նկատեցին որ Յիսուս ուխտաւորներու խումբին մէջ չի գտնուիր: Անմիջապէս Երուսաղէմ վերադարձան Յիսուսը փնտրելու համար: Ի վերջոյ զԱյն գտան Աստուծոյ տաճարին մէջ, ուր կը խօսէր վարդապետներուն հետ եւ կը զարմացնէր զանոնք, իր իմաստուն խօսքերով:

Մարիամ ըսաւ Յիսուսի.

— Որդեակ ինչո՞ւ համար մեզի այսպէս ըրիր:

Յիսուս պատասխանեց իր մօրը.


— Զէի՞՞ք գիտէր որ հօրս տունը պէտք էր ըլլայի:

ԳՈՅ ՍՈՐՎԻԼ

Զէի՞՞ք գիտէր, թէ ինձի պէտք է որ իմ Հօրս տունը ըլլամ: Ղուկ. Բ. 49:

ՅԻՍՈՒՍ ԿԸ ՎԵՐԱԴԱՌՆԱՅ ՆԱԶԱՐԷԹ

(Ղուկ. Բ. 51—52)





Յիսուս իր ծնողքին հետ Երուսաղեմէ վերադարձաւ Նազարէթ: Ան կը զարգանար իմաստութեամբ ու հասակով եւ Աստուծով ու մարդոցմէ շնորհիք գտնելով:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Եւ Յիսուս կը զարգանար իմաստութեամբ ու հասակով,
եւ Աստուծով ու մարդոցմէ շնորհք գտնելով Ղուկ. Բ. 52:

ՅԻՍՈՒՍ ԿՕԳՆԷ ՀԱՅՐ ՅՈՎԱԷՓԻՆ





Հայր Յովսէփ հիւսն էր եւ կ'աշխատէր ուղղամտութեամբ, եւ լաւ հոգ կը տանէր իր ընտանիքին: Յիսուս հնազանդ պատանի մը ըլլալուն, յանախ կ'օգնէր հայր Յովսէփին:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Իմաստուն տղան իր հայրը կ'ուրախացնէ: Առակ. Ժ. 1:

ՅԻՍՈՒՍ Կ'ԱՇԽԱՏԻ





Պատանի Յիսուս խելացի ու աշխատասէր էր: Ան Հայր Յովսէփէն սորվեցաւ հիւսնութեան արհեստը եւ յամախ առանձինը կ'աշխատէր:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Տղու մը վարչին մաքրութիւնը եւ ուղղութիւնը անոր գործերէն կը հասկցուի:

Առակ. Ի. 11:

ՅԻՍՈՒՍ ԲՆՈՒԹԵԱՆ ՄԷԶ





Յիսուս շատ կը սիրէր ծառերը, ծաղիկները, թռչուններն ու ագամիները
եւ գանոնք կը խնամէր:

ԳՈՅ ՍՈՐՎԻԼ

Եւ Աստուած իր ամէն ըրածը տեսաւ, եւ ահա շատ բարի էր: Ծննդ. Ա. 31:

ՅԻՍՈՒՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

(Մատթ. Գ. 13—17)






Յիսուս կը մկրտուի Յովհաննէս Մկրտիչի կողմէ Յորդանան գետին մէջ: Զուրէն դուրս ելլելու պահուն երկինքը կը բացուի եւ Սուրբ Հոգին աղանձի կերպարանով կ'իջնէ իր վրայ: Իսկ երկինքէն Հայր Աստուած կը գոչէ. «Ատիկա է իմ սիրելի Որդիս, որուն հաւնք եմ, զայն մտիկ ըրէք»:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Ատիկա է իմ սիրելի Որդիս, որուն հաւնք եմ, զայն մտիկ ըրէք: Մատթ. Գ. 17:

ԿՈՅՐԻՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

(Մարկ. Ը. 22—26)



Յիսուսի առջեւ բերին կոյր մը եւ կ'աղաչէին որ դպչի անոր: Յիսուս անոր աչքերը թուփով թրջեց, ձեռքը վրան դրաւ եւ հարցուց թէ արդեօք բան մը կը տեսնէ՞: Կոյրը աչքերը բանալով ըսաւ.

— Մարդիկ կը տեսնեմ որ ծառերու նման կը շրջին:


Յիսուս դարձեալ իր ձեռքերը անոր աչքերուն վրայ դրաւ ու կոյրին աչքերը բուլրովին բացուեցան:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Ու անոր առջեւ կոյր մը բերին, ու կ'աղաչէին իրեն որ դպչի անոր: Մարկ. Ը. 22:

ՅԻՍՈՒՍ ԿՕՐՅՆԷ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ

(Մարկ. Ժ. 13-16)



Խուճր մը մայրեր իրենց մանուկները Յիսուսի բերին, որպէսզի զանոնք օրհնէ. իսկ աշակերտները կը սաստէին բերողները: Յիսուս այս բանը տեսնելով ըսաւ իր աշակերտներուն.

— Թող տուէ՛ք այդ մանր տղոցը որ ինծի զան եւ մի արգիլէ՛ք զանոնք, որովհետեւ Աստուծոյ քաճաւորութիւնը այդպիսիներուն է:




Ապա մանուկները գիրկն առաւ, անոնց վրայ ձեռք դրաւ եւ օրհնեց:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Թող տուէ՛ք այդ մանր տղոցը որ ինծի զան եւ մի արգիլէ՛ք զանոնք: Մարկ. Ժ. 14:

ՅԻՍՈՒՄ՝ ՃՐԱԳ ԵՒ ԼՈՅՍ

(Յովհ. Ը. 12, Մատթ. Ե. 14—16)



Յիսուս աշխարհի լոյսն է: Ան իր խօսքերովը կը լուսաւորէ մեզ, որպէսզի խաւարի (մեզի) մէջ չմնանք: Յիսուս կը պատուիրէ մեզի, որ մենք ալ նրազ ըլլանք եւ լուսաւորենք մեր շրջապատը:



ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Ես եմ աշխարհի լոյսը. ան որ իմ ետեւէս կուգայ, խաւարի մէջ պիտի չգայ:

Յովհ. Ը. 12:

ՍԵՐՄՆԱՑԱՆԸ

(Մարկ. Դ. 3—9)



Սերմացանը ցորեն կը ցանէ, որպէսզի հատիկները հողին մէջ իյնալով ծիլեր ար-
ճակեն եւ ապա հասկեր կազմելով շատ արդիւնք տան:




Աստուծոյ խօսքն ալ ցորենի հատիկի նման կը ցանուի մեր սիրտերուն մէջ, որ-
պէսզի անի եւ պտուղ տայ:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Սերմը Աստուծոյ խօսքն է: Ղուկ. Ը. 11:

ՄԱՅՐ ՀԱԻՈՒՆ ՇՈՒՐՋ

(Մատթ. ԻԳ. 37)



Հուտիկները մայր հաւուն շուրջ կը բոլորուին, որպէսզի ան գիրենք խնամէ ու պաշտպանէ:



Մենք ալ հուտիկներու նման պէտք է բոլորուինք Յիսուսի շուրջ, որպէսզի Ան մեզ խնամէ ու իր թեւերուն տակ պահպանէ:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Քեզ իր փեսուրներովը պիտի ծածկէ ու իր թեւերուն տակ պիտի ապաստանիս:

Սաղմ. Դ. (ՂԱ.) 4:

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՄԱՆՈՒԿԸ ՅԻՍՈՒՍԻ ՄՕՏ





Յիսուս կը սիրէ բոլոր մանուկները եւ կը գուրգուրայ անոնց վրայ: Մանուկները պէտք է մօտեցան Յիսուսի, սորվին անոր խօսքերը եւ զվատուած փառարանեն:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Մանկանց ու կաթնկեր տղայոց բերնէն գովութիւն կատարեցիր: Սաղմ. Ը. 2:

ԲԱՐԻ ՀՈՎԻԻԸ

(Յովհ. Ժ. 11—16)






Յիսուս մեր բարի հովիւն է եւ մենք անոր ոչխարներն ենք: Բարի Հովիւը կը պահպանէ իր ոչխարները եւ անոնց սիրոյն համար իր կեանքը կը զոհէ:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Ես եմ Բարի Հովիւը. Բարի Հովիւը իր կեանքը ոչխարներուն համար կը զոհէ:

Յովհ. Ժ. 11:

Ա Ս Տ Ո Ւ Ծ Ո Յ Խ Ն Ա Մ Ք Ը





Աստուած կը խնամէ երկնքի թռչունները, երկրի կենդանիները, ծառերն ու ծաղիկները, եւ մանաւանդ իր գաւակները: Ժամանակին համեմատ անօրեւ կը զրկէ, որպէսզի անին բոյսերը եւ կերակրուին իր բոլոր արարածները:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Նայեցէք երկնքի թռչուններուն որոնք ոչ կը սերմանեն եւ ոչ կը հնձնեն, եւ ոչ ամբարի մէջ կը ժողվեն, ու ձեր Երկնաւոր Հայրը կը կերակրէ զանոնք: Մատթ. 2. 26:

ՅԻՍՈՒՍ Կ'ԱՂՕԹԷ

(Ղուկ. ԻԲ. 39—44)



Յիսուս երբ նեղութեան առջեւ գտնուեցաւ, Գեթսեմանիի պարտեզին մէջ ծունկի գալով սկսաւ աղօթել ու գորութիւն խնդրել:



Մենք ալ Յիսուսի օրինակին հետեւելով միշտ աղօթելու ենք:

ԳՈՅ ՍՈՐՎԻԼ

Անդադար աղօթք ըրէք: Ա. Թեո. Ե. 17:

ԳՈՂԳՈԹԱՅԻ ՍՈՒՐԲ ԽԱՁԸ

(Յովհ. Գ. 14—15)



Յիսուս խաչուեցաւ Գողգոթայի բարձունքին վրայ եւ իր սուրբ աքիւնը թափեց մարդոց մեղքերը քանելու համար: Ով որ Յիսուսի հաւատայ ու թողութիւն խնդրէ, կը փրկուի իր մեղքերէն:



Յիսուսի խաչը գորութիւն է բոլոր բրիստոնեաներուն համար:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Բայց ես՝ քաւ լիցի որ պարծենամ, հապա միայն մեր Տէր Յիսուս Քրիստոսի խաչովը: Գաղ. 2. 14:

ՅԻՍՈՒՍ Կ'ԵՐԵԻԻ ՄԱՐԻԱՄ ՄԱԳԴԱՂԵՆԱՑԻՒՆ

(Յովհ. Ի. 1—18)






Մարիամ Մագդաղենացին առաւօտուն կանուխ գերեզման կ'երթայ ու Յիսուսի մարմինը հոն չգտնելով կը գարմանայ: Վերջը լալով նորէն կը նայի գերեզմանէն ներս: Հոն կը տեսնէ երկու հրեշտակներ: Երբ ետին կը դառնայ, կը տեսնէ Յիսուսը որ կը խօսի: Մարիամ չի կրնար ճանչնալ Յիսուսը եւ կը կարծէ թէ Ան պարտիգպանն է: Սակայն երբ Յիսուս «Մարիամ» կը ձայնէ, Մագդաղենացին իսկոյն կը ճանչնայ Յիսուսը եւ կ'ուրախանայ իր Տիրոջ յարութեան համար:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Մարիամ Մագդաղենացի եկաւ ու աշակերտներուն պատմեց թէ ինչ Տէրը տեսաւ:
Յովհ. Ի. 18:

ՅԻՍՈՒՄԻ ՀԱՄԲԱՐՉՈՒՄԸ

(Ղուկ. ԻԴ. 50—53)



Յիսուս յարութիւն առնելէ ետք, քառասուն օրերու ընթացքին երեւցաւ իր աշակերտներուն: Քառասուներորդ օրը իր աշակերտները տարաւ Ջիթենեաց լեռը, եւ հոն զանոնք օրհնելու ատեն երկինք համբարձաւ:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

Մինչ անոնք կը նայէին, համբարձաւ, եւ ամպ մը զԱնիկա անոնց տեսողութենէն ծածկեց:

Գործք Ա. 9: